«Ֆասթ Բանկ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Նորք-Մարաշ, Գ. Հովսեփյան 32/6
(+374 10) 51 00 00

# ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԻ ՀԱՇՎԻ ԲԱՑՄԱՆ ԴԻՄՈՒՄ-ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N

Կոնֆիդենցիալ
թ.

## Հաճախորդ

Ազգանուն | Անուն | Հայրանուն

Անձը հաստատող փաստաթուղթ
, տրված՝ -ի կողմից, թ.-ին, վավերական է մինչև թ.-ը

Հանր. ծառ. համարանիշ

## Հասցե (բնակության)

Երկիր, քաղաք, փողոց, շենք, բնակարան

## Հաշվի տվյալները

Հաշվի արժույթը

Հաշվեհամար

Քաղվածքի ստացման եղանակ

Բանկի հետ հաղորդակցման եղանակ

Բջջ. հեռախոսահամար

Էլ. փոստ

Հավաստում եմ, որ բոլոր ֆինանսական միջոցները, որոնք փոխանցվել են հաշվից/ներից կամ կփոխանցվեն հաշվին/ներին իմ կամ իմ կողմից լիազորված անձի միջոցով, ստացված են օրինական ճանապարհով և ոչ մի կերպ չեն առնչվում որևէ հանցավոր գործունեության հետ։

ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ

- Ես տալիս եմ իմ համաձայնությունը Բանկի կողմից ուղարկվող ոչ պարտադիր ներկայացման տեղեկատվական և գովազդային հաղորդագրությունները և նյութերը հաղորդակցման ցանկացած եղանակով, ներառյալ վերոնշյալ բջջային հեռախոսահամարով sms հաղորդագրություններ ստանալու վերաբերյալ։
- Սույնով նաև տալիս եմ Բանկին իմ համաձայնությունն անակցեպտ կարգով դրամական միջոցներ դուրս գրել իմ բանկային հաշվից Բանկի կողմից այդ հաշվին սխալմամբ միջոցների մուտքագրման դեպքում, իմ ավանդի համալրման, վարկային պարտավորությունների կատարման նպատակով, ՀՀ օրենսդրությամբ սահմանված բոլոր տեսակի հարկերի և այլ պարտադիր վճարների կատարման նպատակով, դատարանի վճռով, այդ թվում՝ կատարողական փաստաթղթերի հիման վրա դրամական միջոցների դուրսգրման հայտ ստանալու դեպքում, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում։
- Ստորև դրված ստորագրությամբ հաստատում եմ, որ ծանոթացել եմ և համաձայն եմ Ֆիզիկական անձանց Բանկային ծառայությունների մատուցման և սպասարկման ընդհանուր Կանոններին (այսուհետ՝ Կանոններ) և Բանկում գործող Սակագներին, ինչպես նաև ստացել եմ սակագները և պարտավորվում եմ անվերապահորեն հետևել դրանց, համաձայն եմ, որ Կանոնները Բանկի կողմից կարող են միակողմանի փոփոխվել՝ օրենքով սահմանված կարգով։
- Ես համաձայն եմ, որ սույն Հայտ-պայմանագիրը, Կանոնները և գործող Սակագները միասին կազմում են ֆիզիկական անձի բանկային հաշվի պայմանագիր՝ կնքված իմ և Բանկի միջև, որը գործում է անժամկետ և կազմված, ստորագրված է էլեկտրոնային եղանակով։

Ստորագրելով սույն պայմանագիրը՝ հաստատում եմ, որ Բանկի կողմից բանավոր կերպով ծանոթացել եմ ՀՀ օրենսդրության համաձայն նախքան պայմանագրի կնքումը պարտադիր ներկայացվող տեղեկատվությանը։

Դիմում-պայմանագրի օրինակը երկկողմանի ստորագրվելուց հետո ուղարկվելու է հաճախորդի էլ. փոստի հասցեին։
Հաճախորդի և Բանկի ներկայացուցչի կողմից ստորագրվում է ձեռագիր, թվային կամ ձեռագիր ստորագրության փոխակերպման միջոցով:

Դիմող՝

✓

Դիմողի ստորագրություն

Պատասխանատու կատարող՝

Մանրածախ բիզնեսի կառավարման ծառայության ղեկավար՝

Սուրեն Արայի Դավթյան 